ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՉԻ՛ ԸՆԿՃԻ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Արցախի շրջափակումը, առավել ևս նրա կենտրոնի՝ Ստեփանակերտի շրջափակումը, մեծ վնասներ հասցրեց առանց այն էլ ծանր վիճակում գտնվող մարզի ժողովրդական տնտեսությանը:

Այդ առթիվ մեր թերթի սեփական թղթակից ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ հարցազրույց ունեցավ Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ ՄԱՔՍԻՄ ՄԻՐԶՈՅԱՆԻ և կուսակցության քաղաքային կոմիտեի երկրորդ քարտուղար ՀՐԱՆՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ հետ: Ստորև տպագրում ենք այդ հարցազրույցը:

ԹՂԹ.— Արցախցին սպասել և տագնապալի սրտի խորհում ճույս էր պահել, որ վերջապես տեղի կունենա ԽՄԿԿ Կենտկոմի՝ ազգային հարցերին նվիրված պլենումը, իր վճռաբեկ խոսքը կասի, և կանաչ լույս կբացվի Արցախի հայության պահանջների իրականացման ճանապարհին, բայց...

Հ. Մ.— Այո, ԽՄԿԿ Կենտկոմի նշված պլենումը տեղի ունեցավ, բայց արցախյան պրոբլեմին ըստ արժանի պատասխան չտրվեց: Պլենումը իր աշխատանքն սկսեց, երբ Լեռնային Ղարաբաղը արդեն շրջափակման մեջ էր: Պլենումը ավարտվեց, բայց շրջափակումը շարունակվում է: Մարզում իրադրությունը ավելի է սաստկանում այն պատճառով, որ ղարաբաղյան պրոբլեմը և նրա հետ առնչվող իրադարձությունները քաղաքական միանշանակ գնահատական չեն ստանում վերադաս ատյաններում: Ավելին, նենգափոխվում է պրոբլեմի էությունը:

Մ. Մ.— Ինչպես երևում է, արցախյան պրոբլեմի լուծումը պատշաճ ընթացք չի ստանում նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանում: Այն որպես այդպիսին չմտցվեց նստաշրջանի օրակարգի մեջ: Չնայած դեպուտատները հուսադրող խոսքեր են ասում Արցախի պրոբլեմի քաղաքական լուծման մասին, դատապարտում են շրջափակումը, բայց... Շրջափակման վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը ընդհանուր բնույթ է կրում, ոչինչ չի նշվում շրջափակման կազմակերպիչների, ճանապարհների փակման անօրինականությունների մասին: Նորից հանցագործները հովանավորվում են: Շրջափակումը մի Նոր Սումգայիթ է, քաղաքական և տնտեսական դիվերսիա: Մեծ ճանապարհի ավազակները մնում են անպատիժ, արտոնյալ, կատարում են այն, ինչ որ թելադրվում է վերևից: Այո, վերևի՛ց:

ԹՂԹ.— Շրջափակումը անելանելի վիճակի մեջ է դրել մարզի, հատկապես Ստեփանակերտ քաղաքի ժողովրդական տնտեսությունը, բնակչության պարենային ապասարկման գործը:

Հ. Մ.— Այո, լրջամտյա գործադուլը դադարեցնելուց հետո օդոստոսի վերջերից քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների և հիմնարկների կոլեկտիվները վերսկսեցին աշխատանքները, իսկ Ադրբեջանը համատարած կերպով ավելի ուժեղացրեց շրջափակումը: Այսօր արտաքին աշխարհի հետ մարզը հիմնականում կապված է օդային տրանսպորտով՝ Ստեփանակերտ—Երևան և Ստեփանակերտ—Գորիս օդային ուղիներով: Այս տարվա սեպտեմբերի 5-ից Ստեփանակերտի երկաթուղային կայարանը անգործություն է մատնված: Վերջերս սկսել են կայարան մտնել հատ ու կենտ գնացքներ՝ բեռները թալանված, ջարդված ու կողոպտված, վագոններից շատը՝ դատարկ: Իսկ սենդամքերքներով բեռնված վագոններից և ոչ մեկը տեղ չի հասնում: Նրանց առաջ փակ են ճանապարհները: Մարզկենտրոնում այսօր օրհասական վիճակ է ստեղծվել: Ալյուրը կհերիքի հազիվ մի քանի օր, իսկ թթխմորը՝ ընդամենը երկու օր: Քաղաքի բարոյապես և ֆիզիկապես մաշված միակ հացի գործարանը աշխատում է ոչ լրիվ հզորությամբ: Հաց ձեռք բերելը, իրոք, լուրջ պրոբլեմ է դարձել մեր քաղաքում: Մարդիկ գիշերները հերթի են կանգնում հացի համար:

ԹՂԹ.— Էլ ինչո՞վ է դա տարբերվում լենինգրադյան բլոկադայից:

Մ. Մ.— Արցախի բլոկադան առավել վատ է: Լենինգրադը ուներ «կյանքի ճանապարհ», ամբողջ երկիրն էր ցավում Լենինգրադի համար: Այսօր, լավ է, դեռ օդային ճանապարհը կա, բայց բավական է երկնքում մի փունջ ամպ երևաց, այդ ճանապարհն էլ կփակվի: Ադդամի օդանավակայանի դիսպետչերականից թույլ չի տրվի թռիչք-վայրէջք: Ինչ անենք, մեր օդանավակայանը ենթարկվում է Ադդամին, իսկ «Ստեփանակերտ» երկաթուղային կայարանը՝ Կիրովաբադին: Իսկ այսօր Արցախի վիճակը ամեն կերպ քողարկվում է, խեղաթյուրվում: Գերլարված իրադրությունը չի ներկայացվում այնպես, ինչպես որ կա: Շարունակ ձգձգվում, անտեսվում է ղարաբաղյան պրոբլեմը: Ադրբեջանական կողմը, հովանավորվելով ինչ-որ անհայտ ամուր ձեռքերի կողմից, լկտիաբար, միջնադարյան մեթոդներով, շարունակում է իր ռեցիդիվիստական մանևրները: Մեծ ճանապարհի ավազակները առանց պատժվելու կտրում են ճանապարհները: Տրանսպորտը ոչ ներս են թողնում, ոչ դուրս:

Հ. Մ.— Այո, և հենց այդ պատճառով էլ այսօր քաղաքի ձեռնարկություններում և երկաթուղային կայարանում կուտակված միլիոնավոր ռուբլիների արտադրանքը չի առաքվում պատվիրատուներին: Ջախջախվում են արտադրանքի մատակարարման պայմանագրային պարտավորությունները: Քաղաքը բացարձակապես չի ստանում վառելաքսանյութեր: Բենզինի զամասի հետևանքով գրեթե լիովին կազմալուծված է երթևեկության հիմնական միջոցի՝ տրանսպորտի աշխատանքը:

Մ. Մ.— Ավելի վատթար վիճակում են քաղաքի շինարարական աշխատանքները: Միայն սեպտեմբեր ամսում № 9 շինտրեստը կրել է մոտ երկու միլիոն ռուբլու վնաս: Կառույցները շինանյութեր չլինելու պատճառով համարյա մատնվել են պարապուրդի: Ահա ուր որ է ձմեռ է, իսկ հազարավոր գաղթականներ դեռևս մնում են անօթևան: Քաղխորհրդի բնակարանային կարիքավորների ցուցակն անցնում է 10 հազարից: Հումք չլինելու պատճառով լիովին պարապուրդի է մատնված նաև ասֆալտբետոնի գործարանը: Քաղաքը գտնվում է անմխիթար վիճակում, փողոցները չեն բարեկարգվում՝ ասֆալտ չլինելու պատճառով: Քաղաքի կյանքի նորմալ ռիթմն ապահովելու համար անհրաժեշտ են փոխադրիչ միջոցներ: Որոշել ենք օգտագործել տեղական շինանյութերը, սակայն երբ փոխադրամիջոցները վառելանյութ չլինելու պատճառով կանգնած են, ի՞նչ կարող ենք անել:

Հ. Մ. — Քաղաքի շինանյութերի կոմբինատի ֆինանսական դրությունը ծայրահեղ սուղ է: Տրանսպորտի պատճառով հարկադրված պարապուրդի է մատնված կոմբինատի Հարավի քարհանքի կոլեկտիվը: Այստեղ 40 բեռնատար ավտոմեքենաներից աշխատում է միայն 6-ը: Կանգնած են մարմարի բլոկների և խճի արտադրման արտադրամասերը, այդ շինանյութերը չեն առաքվում պայմանագրային տասնյակ պատվիրատուներին: Մարտակերտի քարհանքի հաստոցների կտրիչները դուրս են եկել շարքից, իսկ նորը չի ստացվում, արտադրությունը կանգնած է: Երկաթուղային կայարանը փաստորեն ոչ մի բեռ չի տեղափոխում: Այսօրվա դրությամբ այս փոքրիկ կայարանում են գտնվում 220 բեռնված վագոններ, 200 կոնտեյներներ: Նույնիսկ կայարանի միակ մանևրային ջերմաքարշը դիզելային վառելիք չունենալու պատճառով կանգնած է:

Մ. Մ.— Մի խոսքով՝ ադրբեջանական իշխանավորները բացահայտ պատերազմի մեջ են մտել արցախցիների հետ, նպատակ ունենալով կոտրել մեր կամքը: Բայց նրանք ոչնչով չեն կարող ընկճել հայ ժողովրդի կամքը, նա նման փորձություններին ու բոցերի մեջ ավելի է կարծրացել: Մենք շատ փորձություններ ենք դիմակայել, այս փորձությանն էլ կդիմակայենք, և գալիք բոլոր փորձություններին էլ կդիմակայենք: Մեզ զորավիգ է մեր անսասան կամքը: Մենք նահանջ չունենք: Շրջափակումը փաստորեն ուժային ճնշման փորձ է: Արցախի հայ բնակչությունը շուրջ 68 տարի այդ ճնշման տակ է եղել, և նա սովոր է նման վանդալիստական ձևերին: Շրջափակումը երբեք չի կարող նպաստել պրոբլեմների դեմոկրատական լուծմանը: Արցախի հարցը պետք է միայն քաղաքական լուծում ստանա, խաղաղ ճանապարհով: Այսօր ցավալին այն է, որ շրջափակման պատճառով դրսից հումք չի ներմուծվում, և քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները սկսել են մեկը մյուսի հետևից պարապուրդի մատնվել:

Հ. Մ.— Այո, վաղը կամ մյուս օրը պարապուրդի կմատնվեն նաև Ղարաբաղի մետաքսակոմբինատի հաստոցները, կարի ֆաբրիկայի սարքավորումները: Նույնպես՝ հումք չլինելու պատճառով: Այսօր կահույքի ֆաբրիկայի բանվորների կեսից ավելին չի աշխատում էմուլսիայի, ձեթի և արտադրական այլ նյութերի բացակայության հետևանքով: Արտադրական կոմբինատի պահեստները, խցերը և կոնտեյներները է լցված մոտ մեկ միլիոն ռուբլու պատրաստի արտադրանք: Առավել ծանր վիճակում է գտնվում էլեկտրատեխնիկական գործարանը: Այստեղ վաղուց է կանգնեցված պատրաստի արտադրանքի մատակարարումը սպառողներին: Ձեռնարկության հաշվարկային հաշվում կոպեկ անգամ չկա: Կորուստներն անցնում են երկու միլիոն ռուբլուց: Կոնդենսատորների գործարանը իր արտադրանքի միայն մի չնչին մասն է առաքել պատվիրատուներին, այն էլ հենց իրենց՝ պատվիրատուների ուղարկած ինքնաթիռով: Սակայն երկրի 100-ից ավելի ձեռնարկություններ առայսօր անհամբեր սպասում են գործարանի արտադրանքին: Կոնդենսատորների բացակայության պատճառով նրանք էլ այնտեղ են գտնվում պարապուրդի մեջ:

ԹՂԹ.— Մամսիմ Միխայելի, իսկ ինչպե՞ս է բնակչության պարենային ապահովման գործը:

Մ. Մ.— Շատ վատ: Վատթարագույնը ևս չգիտեմ: Սոսկալի ծանր է Ստեփանակերտի խառն առևտրի վիճակը: Վերջերս ԽՍՀՄ առևտրի մինիստրության հրամանով Ստեփխառն առևտրին հատկացված ֆոնդերը պետք է հիմնականում ստանանք Հայաստանից, մի մասն էլ Վրաստանից ու Ստավրոպոլի երկրամասից: Մինչդեռ շրջափակումը հնարավորություն չտվեց «ճաշակել» այդ ֆոնդերը: Խանութներում «մաքրություն» է, չկան առաջին անհրաժեշտության ապրանքները, բացառությամբ մսի և որոշ չափով էլ կաթնամթերքների, չնայած դրանք խանութ հասցնելն էլ է մեծ դժվարությունների հետ կապված, քանի որ չկա տրանսպորտային վառելանյութ: Ինչո՞ւ միս կա: Որովհետև կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում անասնակեր չլինելու պատճառով հարկադիր մորթ է կատարվում: Մսի կոմբինատում ահագին միս է կենտրոնացված: Տրանսպորտի բացակայության պատճառով այն մենք չենք կարողանում մարզից դուրս սպառողներին հասցնել: Միայն վերջերս Վրաստանից և Հայաստանից բեռ տեղափոխող ինքնաթիռներով ու ուղղաթիռներով հնարավոր է լինում միս ուղարկել Թբիլիսի և Երևան քաղաքների սպառողներին:

Ասացի, որ սենդամքերքները, առաջին անհրաժեշտության ապրանքները, դպրոցականների համար գրենական պիտույքները բացակայում են խանութներում: Չկա՛: Շատ բան չկա, բայց զարմանալիորեն մեր ժողովուրդը չի նվերվում, համաձայն է դրանից էլ վատթարագույնին, միայն թե նրանց բաղձալի երազանքը կատարվի, Արցախը միացվի մայր Հայաստանին: Այսպես թե այնպես, արցախցին երբեք չի քաղցել, նա բոլոր ժամանակներում էլ կարողացել է ապահով պահել իր ընտանիքը, կերակրել իր զավակներին: Արցախ աշխարհը հարուստ երկրամաս է: Արցախի բարիքները շատ են: Արցախը չի թողնի, որ իր ժողովուրդը քաղցի: Արցախը յուղոտ պատառ է, ահա թե ինչու Ադրբեջանը չի ուզում ձեռքից բաց թողնել այն, եթե զիջի, ապա ինքը կքաղցի: Դա լավ են հասկանում Ադրբեջանի ղեկավարները: Օրերս «ժամանակ» ինֆորմացիոն ծրագիրը Մոսկվայից երկրով մեկ հայտնեց Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը հանրապետության սուվերենության, Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանի ԻԽՍՀ-ն Ադրբեջանի անբաժան մասը լինելու մասին: Նորից նարիմանովյան երգը, նորից սպառնալիքնե՞ր, շանտաժնե՞ր...

Իսկ ինչո՞ւ չեն ուզում նրանք մարդավարի հասկանալ, որ դա անհնարին բան է: Արցախը չի կարող Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ մնալ, լինել նրա անբաժանելի մասը: Երբե՛ք: Արցախահայությունը որոշել է իր տեղը՝ մայր Հայաստանը: Նա իր արդար որոշումից նահանջողը չէ՛, չէ՛ ու չէ՛:

ԹՂԹ.— Իսկ ստեղծված վիճակից դուրս գալու ի՞նչ ելք եք դուք գտնում:

Հ. Մ.— Ելքը Ղարաբաղյան պրոբլեմի միայն քաղաքական լուծումն է, այսինքն՝ մարզը վերամիավորել մայր Հայաստանի հետ: Այսօր որոշ ատյաններում կարծում են, թե մարզի շրջափակումը ձեռնտու է ոչ միայն Ադրբեջանին, այլև կենտրոնի հակավերակառուցողական ուժերին: Բայց շարաշար սխալվում են: Դա ձեռնտու չէ ոչ ոքի:

Մ. Մ.— Ինչպես ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներից շատերն են ասում, ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքն է Լեռնային Ղարաբաղում անցկացնել ընդհանուր հանրաքվե, լուծել ղարաբաղյան պրոբլեմը արդար ճանապարհով: Հարցը պետք է լուծել Արցախի բնակչության կամքին համապատասխան քաղաքական միջոցներով: Իսկ դա Արցախի միացումն է մայր Հայաստանին: Այլևս անհնար է ձգձգել այս հասունացած հարցը: Հարցի ձգձգումը ոչ մի լավ բանի չի հանգեցնի, այլ ավելի կսրի իրավիճակը:

ԹՂԹ.— Մենք համոզված ենք, որ շրջափակման տագնապները արցախցիների մեջ խուճապ չեն առաջացնի, այլ ընդհակառակը, նրանք ավելի կգտնեն իրենց արդարացի պայքարում: Հուսանք, որ արդարությունը, ի վերջո, կհաղթանակի: Այո՛, սպասենք և հուսանք...